



## 43. ԱՄՈԹՈՎ, ՀԱՐՍԸ

Կըլնի շիլնի մի աղջիկ: Էս աղջիկը զարիր տեղ հարս գնացած ա  
քլնում: Զատկի շարթին էս հարսի աղպերը զալիս ա քվորը տանի  
հերանց, որ մի քանի օր ընդե կենա, հորնըմոր հեննա, բարեկամ-  
ների հեննա, ևս ինչ զիտամ՝ տես ու ճանանչի հեննա ուրախանա,  
էլ եդ գա կեսառանց գեղը: Չունքի հերանց գեղը մոտիկ ա ըլնում,  
ընդուր հմար էլ ձի չի նիլում, զեր ա կենում աղպոր հեննա ոտով  
ընկնում ճամփա: Ինքն էլ էդ վախտերքը էրկուֆոգիս ա ըլնում, որ  
ըսօր, էգուց պտի աղատվեր:

Գալիս են զալի, շատն ու քիչն աստոծ զիտա, խելի տեղ զալիս  
են, մի զաֆիլ քվոր ցավը բռնում ա:

Ի՞նչ անի, ի՞նչ լանի, աղպորն ասում ա.— Դու աղաք-աղաք  
գնա՛, ևս զալիս եմ:

Նրա բախտիցը ըտերանք մի էր ա ըլնում. էթում ա էդ էրի մի-  
շին ինքն իրան աղատվում, բերում մի սի՞րուն, նա՛շխում, դըմըռո-  
ճիկ, լստիկ-մխտիկ էրեխա: Գոզնոցը եդ ա անում, ճոճ կապում  
էրի միջին, էթում ծառի լեն տերեններ պոկոտում, բերում էրեխին  
տոտաշոր, թաթաշոր շինում, էրեխին լավ լազաթին փաթթում, դնում  
ճոճը: Ինքն իրան բերում ա էրեխի անումը դնում Օրսագյուղ, նըս-  
տում ըտե ճոճն օրորում, ասում.

Նանի'կ, նանի'կ, Օրսագյուց,  
 Օրդ թամամ, Օրսագյուց.  
 Կենատերև տոտաշոր,  
 Նեղատերև թաթաշոր.  
 Ջելրանը քեզ ծիծ կտա,  
 Քամին կդա, կօրորա:

Ասում ա՝ օրորում, ասում՝ օրորում, ընչանք էրեխի քունը տա-  
 նում ա: Եննա էրեխի ջովստ թուշը պաշում ա, ըտե օխտը բեռը ար-  
 տասովք չափում, լաց ըլնում, թողում գալի աղպոր եննուցը հաս-  
 նում: Աղպորիցն էլ ամանցում ա, բան չի ասում նրան, ընչանք հաս-  
 նում ա հերանց գեղը, մորը թաքուն անկաշին ասում, թե. «Ծսե՛նց,  
 ըսե՛նց բան, ֆլա՛ն էրումը ազատվել եմ, մի էրեխա բերե,  
 ընդե ճոճ շինե, միջին քուն դրե, էկե»:

Նո՞ր մերը մարդ ա ղոկում, էրը սալըդ տալի, որ էթան բերեն:  
 Էթում են ման գալի, էրը գտնում, նի մննում՝ ղո՞րթ որ էրե-  
 խեն ճոճի միջին, մի ջելրան էլ էկել ա, նրան ծիծ ա տալի: Վեր են  
 ունում էրեխին սաղ-սալամաթ բերում տում:

Էլ ի՛նչ ասիլ կուզի, մերը էրեխին որ տենում ա, ուրախանում,  
 աշխարով մին ա ըլնում: Նո՞ր բերում են էրեխին կնքում, անումը  
 էլի դնում Օրսագյուզ, ոնց որ մերը դրել էր:

